Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2

Հանրապետական եռակողմ հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստի

2012 թվական, հոկտեմբերի 15, ժամը՝ 14:00

Նախագահում էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա. Ասատրյանը

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ՝

Սուրեն Կարայան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Շամամ Հարությունյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության <<Զբաղվածության պետական ծառայություն>> գործակալության պետ
Բորիս Խառատյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի տեղակալ
Ժանետա Թորոսյան	Մշակույթի և ԶԼՄ-ների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Շմավոն Մկրտչյան	Առևտրի, հասարակական սննդի, սպառկոոպերացիայի և ծեռներեցության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Համլետ Դանիելյան	Մեքենաշինարարների և սարքաշինարարների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Գագիկ Մակարյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ
Պողոս Գաբրիելյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության Արագածոտնի տարածքային միության նախագահ
Էդուարդ Կիրակոսյան	Հայաստանի գործատուների հանրապետական

	միության <<Տաքսի ծառայությունների ասոցիացիա>> ճյուղային միության գործադիր տնօրեն
Շուշանիկ Բարսեղյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահի տեղակալ-սոցիալական գործընկերության հարցերով փորձագետ

Հանձնաժողովի քարտուղար՝

Արփինե Սարգսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատանքի բաժնի գլխավոր մասնագետ

Հրավիրվածներ՝

Արայիկ Պետրոսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ
Թադևոս Ավետիսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության պետ
Հասմիկ Խաչատրյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ
Հակոբ Մանուկյան	ՀՀ աշխատանքի պետական տեսչության պետ
Նվեր Արզունյան	ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի եվրաինտեգրման վարչության իրավական բարեփոխումների բաժնի պետ
Կարինե Մադոյան	Հայաստանի Արհմիությունների կոնֆեդերացիայի աշխատակազմի

	սոցիալ-տնտեսագիտական և աշխատանքի պաշտպանության բաժնի վարիչ

Բացակայում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Արթուր Հովհաննիսյան	ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի դատաիրավական բարեփոխումների վարչության պետ
Կարինե Ալոյան	<<Էլեկտրաարհմիություն>> արհեստակցական կազմակերպությունների ճյուղային միության նախագահ
Սուրեն Չիբուխչյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության <<Արմենպակ>> ճյուղային միության նախագահ
Արա Պետրոսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. **ՀՀ աշխատանքի պետական տեսչության 2011 թվականի տարեկան գործունեության վերաբերյալ հաշվետվության ներկայացում և քննարկում:**
2. **Հայաստանի Հանրապետության զբաղվածության 2013-2018 թվականների ռազմավարության նախագծի ներկայացում և քննարկում:**

Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանի կողմից բարձրացված այն հարցի կապակցությամբ, թե արդյոք կան նիստի օրակարգի հետ կապված հարցեր կամ առաջարկներ, ներկաների կողմից կարևորվեցին և առաջարկություններ ներկայացվեցին հանձնաժողովի քննարկմանը ներկայացնել նաև հետևյալ հարցերը.

- զբաղվածության ամենամյա պետական ծրագրերի 2011 թվականի կատարողականը.
- ինտեգրված սոցիալական ծառայությունների նոր մոդելը.
- 2013 թվականի պետական բյուջեի նախագծի սոցիալական ապահովության մասի հիմնական փոփոխությունները.

- անդրադառնալ ԱՄԿ փորձագետների կողմից ներկայացված առաջարկությունների, ինչպես նաև Լիտվա կատարած ուսումնական այցի արդյունքներով Հանձնաժողովի աշխատանքային խմբի կողմից մշակված Հայաստանի Հանրապետությունում սոցիալական գործընկերության հետագա զարգացման և ամրապնդման վերաբերյալ առաջարկություններին:

Հանձնաժողովի նախագահի առաջարկով և Հանձնաժողովի անդամների համաձայնությամբ որոշվեց նշված հարցերն ըստ առավել կարևորության ներառել Հանձնաժողովի հաջորդ նիստերի օրակարգ: Պայմանավորվածություն ձեռք բերվեց նաև անհրաժեշտության դեպքում հրավիրել արտահերթ նիստեր:

1. **Օրակարգի առաջին հարցը ներկայացրեց ՀՀ աշխատանքի պետական տեսչության պետ Հ. Մանուկյանը:**

Հակիրճ ներկայացվեց ՀՀ աշխատանքի պետական տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) 2011 թվականի տարեկան գործունեության վերաբերյալ հաշվետվությունը: Նշվեց, որ Տեսչությունն աշխատանքային օրենսդրության կիրարկման ուղղությամբ խորհրդատվություն, մեթոդական օգնություն տրամադրելու նպատակով 2011 թվականին նույնպես Երևան քաղաքում և մարզերում կազմակերպել և անցկացրել է սեմինարներ, որոնց մասնակցել են բավականին մեծ թվով անձինք:

Տեսչության նախաձեռնությամբ 2011 թվականին 1-ին անգամ կազմակերպվել են ՀՀ աշխատանքային օրենսդրության վերաբերյալ սեմինար-խորհրդատվություններ աշխատողների համար Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի մասնակցությամբ:

Նշվեց, որ 2010 թվականի համեմատ աճել է նաև էլեկտրոնային փոստով ստացված դիմում-հարցումների թիվը, որոնց բոլորին տրվել են անհրաժեշտ պարզաբանումներ:

Տարվա ընթացքում Տեսչությունը ստացել է շուրջ 523 դիմում-բողոք թվով 1015 քաղաքացիներից: Ստացված դիմումների վարույթների արդյունքում վերականգնվել է տեսչություն դիմած 888 քաղաքացու խախտված աշխատանքային իրավունք կամ տեսչություն դիմած քաղաքացիների 88.2 %-ը: Դիմումները վերաբերել են սպասարկման (185), առևտրի (80), արտադրության (78), կրթության (50), առողջապահության (41), շինարարության (36), պետական հիմնարկների (29), հանքարդյունաբերություն (7), ՏԻՄ (4) և այլ (13) ոլորտներին:

Տարվա ընթացքում իրականացվել է 735 ստուգում, որոնց արդյունքում նշանակվել է 197.638.279 դրամ վարչական տուգանք: Նախորդ տարվա համեմատությամբ ստուգումների և ուսումնասիրությունների քանակը կրկնակի նվազել է: Ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է անօրինական աշխատանքի 1260 դեպք, հայտնաբերվել է չվճարված, վճարման ենթակա 842.083.116 դրամ աշխատավարձ:

Տեսչության կողմից հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված խախտումների վերլուծության արդյունքներով դրանց 42%-ը վերաբերում են չվճարված աշխատավարձին, 24%-ը՝ անօրինական աշխատանքին, իսկ մնացած 34%-ը հանդիսանում են աշխատանքային օրենսդրության այլ խախտումներ:

Նշվեց, որ հաշվի առնելով տարբեր ոլորտներում առկա ռիսկերի հայտնաբերման ուղղությամբ տեսչության կողմից իրականացված վերլուծությունները՝ 2011 թվականին ՀՀ վարչապետին է ներկայացվել 2010 թվականի արդյունքներով 70 մլն դրամից պակաս

շրջանառություն ունեցող տրանսպորտի, հանգստի և ժամանցի ոլորտների 176 գործատուների ցանկը, այն դիտարկելով որպես ռիսկային գոտի՝ հատկապես թաքնված զբաղվածության առումով: Արդյունքում ստացվել է ՀՀ վարչապետի թույլտվությունը 125 կազմակերպություններում ուսումնասիրություններ անցկացնելու համար, որից 95-ը տաքսի ծառայություն մատուցող, 30-ը հանգստի և ժամանցի կազմակերպման կազմակերպություններում: 2011 թվականի ընթացքում փաստացի ուսումնասիրություններ են իրականացվել տաքսի ծառայություն մատուցող, հանգստի և ժամանցի ոլորտների 122 գործատուների մոտ, որից 92-ը տաքսի ծառայություն մատուցող կազմակերպություններում, 30-ը՝ հանգստի և ժամանցի ոլորտի կազմակերպություններում: Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է անօրինական աշխատանքի 852 դեպք, հայտնաբերվել է 51.1 մլն դրամ վճարման ենթակա աշխատավարձ:

2011 թվականի ընթացքում արձանագրվել է 14 դժբախտ դեպք, որից 3-ը՝ մահվան ելքով /սպասարկման, հանքարդյունաբերության և շինարարության ոլորտներում/: Գործատուների կողմից դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների վերաբերյալ բոլոր դեպքերը և ծառայողական քննության արդյունքները վերլուծվել են ՀՀ աշխատանքի պետական տեսչությունում: Դժբախտ դեպքերի կանխարգելման նպատակով դրանց պատճառների վերաբերյալ վերլուծական տեղեկատվություն է ուղարկվել նույն ոլորտում գործունեություն ծավալող գործատուներին:

Հանգամանորեն ներկայացվեց նաև սոցիալական գործընկերների, միջազգային փորձագետների և Աշխատանքի միջազգային կազմակերպության հետ համագործակցության կայացման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

Նշվեց նաև, որ Տեսչությունն ակտիվորեն ներգրավված է եղել նաև իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներում:

Հաշվետվության ներկայացումից հետո Գ. Մակարյանի և Բ. Խառատյանի կողմից նշվեց, որ ուրախալի է այն փաստը, որ Տեսչության աշխատանքները դարձել են առավել թափանցիկ և առավել ակտիվացել է Տեսչության համագործակցությունը սոցիալական գործընկերների հետ:

Հաշվետվության ներկայացմանը հաջորդեցին հարցերը: Մասնավորապես Գ. Մակարյանի, Բ. Խառատյանի, Շ. Բարսեղյանի, Ս. Կարայանի, Շ. Հարությունյանի կողմից բարձրացվեցին հետևյալ հարցերը.

1. Արդյոք կա վերլուծություն այն մասին, թե անօրինական աշխատանքի հայտնաբերված դեպքերը որ ոլորտներում են:
2. Հնարավոր է, որ Տեսչության կողմից հայտնաբերված աշխատանքային իրավունքների խախտումների հիմքում ընկած են եղել աշխատանքային օրենսդրությունում հնարավոր բացթողումները:
3. Տեսչության ինտերնետային պաշտոնական կայք-էջում առկա տեղեկատվության թարմացման խնդիրը, մասնավորապես օրենսդրության մասում:
4. Ինչո±վ է պայմանավորված աշխատանքի վայրում դժբախտ դեպքերի՝ Տեսչության հաշվետվությունում ամրագրված թվի /14/ տարբերությունը ՀՀ ազգային վիճակագրական ծառայության /62/, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի /39/ թվի համեմատ:

5. Կա արդյոք վերլուծություն, թե Տեսչության կողմից արձանագրված անօրինական աշխատողների թիվը ֆորմալ զբաղվածության քանի տոկոսն է կազմում:
6. Հնչեցվեց նաև առաջարկություն այն մասին, որ Տեսչության հետագա հաշվետվություններում ներկայացվի նաև տեղեկատվություն ըստ ստուգումներ իրականացված կազմակերպությունների ունեցած աշխատողների թվի դասակարգման՝ խոշոր, միջին, փոքր:

Հնչեցված բոլոր հարցերին Հ. Մանուկյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ: Մասնավորապես նշվեց, որ.

1. Անօրինական աշխատանքի հայտնաբերման տեսանկյունից առավել ռիսկային են տրանսպորտի և սպասարկման ոլորտները: Անօրինական աշխատուժի խնդիրները հատկապես շատ են փոքր և միջին բիզնեսում:
2. Արձանագրված խախտումների հիմքում օրենսդրական հնարավոր բացերին վերաբերող հարցի կապակցությամբ, նշվեց, որ աշխատանքային օրենսդրությունում չկան ընդգծված հոդվածներ, որ գործատուների համար աշխատողների աշխատանքային իրավունքների խախտման հնարավություն տան.
3. Տեսչության ինտերնետային պաշտոնական կայք-էջի թարմացման խնդրի կապակցությամբ նշվեց, որ առկա է տեխնիկական խնդիր, որն անպայմանորեն հնարավորինս արագ կշտկվի:
4. Դժբախտ դեպքերի՝ Տեսչության հաշվետվությունում ամրագրված թվի /14/ և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության /62/, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի /39/ թվերի տարբերության վերաբերյալ նշվեց, որ Տեսչության հաշվետվությունում ամրագրվել է դժբախտ դեպքերի այն թիվը, որոնց մասին գործատուն կամ համապատասխան մարմինը իրազեկել են Տեսչությանը: Այդ տարբերությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ 2010 թվականի դեկտեմբերից ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 6-ի <<Հայաստանի Հանրապետության աշխատանքի պետական տեսչություն գործատուների կողմից տարեկան հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու մասին>> N 2301-Ն որոշումը: Սակայն միաժամանակ նշվեց, որ ներկայումս իրականացվող տեսչական բարեփոխումների շրջանակներում մշակվել և շրջանառության է դրվել «Ստուգում իրականացնող պետական մարմինների միջև տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ իրենց տվյալների բազաներում առկա տեղեկատվության փոխանակման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով արդեն իսկ կարգավորվում է վերոնշյալ հարցը:
5. Կա արդյոք վերլուծություն այն մասին, թե Տեսչության կողմից արձանագրված անօրինական աշխատողների թիվը ֆորմալ զբաղվածության քանի տոկոսն է կազմում հարցի կապակցությամբ նշվեց, որ մինչ այժմ Տեսչության կողմից նման վերլուծություն չի կատարվել: Ընդհանուր առմամբ այդ ցուցանիշը կարելի է հաշվարկել միայն կատարված ուսումնասիրությունների մասով:
6. 6-րդ կետում հնչեցված առաջարկի կապակցությամբ Հ. Մանուկյանը նշեց, որ տեսչության հաջորդ հաշվետվությունում կարտացոլվի նաև առաջարկված տեղեկատվությունը:

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց.

ՀՀ աշխատանքի պետական տեսչության 2011 թվականի տարեկան գործունեության վերաբերյալ հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

2. Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց Թ. Ավետիսյանը:

Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանի առաջարկությամբ, հաշվի առնելով այն, որ ներկաները բոլորը հստակ տեղեկացված են Հայաստանի Հանրապետության զբաղվածության 2013-2018 թվականների ռազմավարության նախագծից, Թ. Ավետիսյանը հնարավորինս հակիրճ ներկայացրեց Հայաստանի Հանրապետության զբաղվածության 2013-2018 թվականների ռազմավարության նախագծի անհրաժեշտությունը, մշակման փուլերը, նախագծի մշակմանը սոցիալական գործընկերների մասնակցության, ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագրի, միջոցառումների իրականացման գործողությունների, պատասխանատու կատարողների մասին տեղեկատվություն:

Ռազմավարության ներկայացմանը հաջորդեցին մի շարք հարցեր: Մասնավորապես Բ. Խառատյանի, Շ. Բարսեղյանի, Գ. Մակարյանի կողմից բարձրացվեցին հետևյալ հարցերը.

1. Ռազմավարության տեքստում /66-67-րդ կետեր/ հստակ սահմանված է, որ 2004 թվականի կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում, կարգավորումից դուրս է մնում աշխատանքի վայրում դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների հետևանքով անձի կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցում ստացող այն անձանց խնդիրները, որոնց պատճառված վնասի համար պատասխանատու ճանաչված կազմակերպությունները լուծարվել են 2004 թվականի օգոստոսի 11-ից հետո: Մինչև նշված օրենսդրական փոփոխությունը՝ այդ անձանց վնասի փոխհատուցումը շարունակվում էր վճարվել ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին: Խնդրի համակարգային լուծման նպատակով 2011 թվականին ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակվել է ՀՀ արտադրական դժբախտ պատահարներից և մասնագիտական հիվանդություններից պարտադիր ապահովագրության համակարգի ներդրման հայեցակարգի նախագիծը, որը գտնվում է շահագրգիռ քննարկումների փուլում:

   Սակայն չնայած վերոնշյալին ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագրում խնդրի լուծումը, ըստ Բ. Խառատյանի, արտացոլված չէ:
2. Նախորդ հարցին ի լրումն ներկաների կողմից նաև ներկայացվեց մտահոգություն այն մասին, որ չնայած այն հանգամանքին, որ 2011 թվականին ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակվել է ՀՀ արտադրական դժբախտ պատահարներից և մասնագիտական հիվանդություններից պարտադիր ապահովագրության համակարգի ներդրման հայեցակարգի նախագիծ, այնուամենայնիվ, այդ նախագծով չի կարգավորվում աշխատանքի վայրում դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների արդյունքում այն անձանց կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցման խնդիրները, որոնց պատճառված վնասի համար պատասխանատու ճանաչված կազմակերպությունները լուծարվել են 2004 թվականի օգոստոսի 11-ից հետո և միջոցներ

կամ իրավահաջորդ չլինելու պատճառներով վնասի հատուցումը չի շարունակվում: Բացի այդ, սոցիալական գործընկերների դժգոհություն հայտնեցին նաև այն մասին, որ ՀՀ արտադրական դժբախտ պատահարներից և մասնագիտական հիվանդություններից պարտադիր ապահովագրության համակարգի ներդրման հայեցակարգի՝ ՀՀ ֆինանսների նախարարությունում կազմակերկված քննարկման ժամանակ ներկայացված, հետագայում լրամշակված և ՀՀ կառավարություն ներկայացված նախագիծն էականորեն տարբերվում է սոցիալական գործընկերներին կարծիքի ներկայացված տարբերակից:

3. Ռազմավարությունում բացակայում են աշխատավարձի ինդեքսավորման հարցի կարգավորման լուծումները:
4. Ռազմավարությունում նախատեսված է «Զբաղվածության մասնավոր գործակալությունների մասին» ԱՄԿ թիվ 181 կոնվենցիայի վավերացումը, սակայն միջոցառումների ծրագրում համապատասխան ընթացակարգերը նախանշված չեն:
5. Բարձրացվեց նաև «Զբաղվածության մասնավոր գործակալությունների մասին» ԱՄԿ թիվ 181 կոնվենցիան մասնակի վավերացնելու հարցը՝ ելնելով այն հանգամանքից, որ այն բավականին մեծ պարտավորություններ է սահմանում երկրի համար:

Հնչեցված բոլոր հարցերին Թ. Ավետիսյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

1. Հնչեցված 1-ին հարցի կապակցությամբ նշվեց, որ հարցի կարգավորումը նախատեսված է ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագրի 6-րդ կետի միջոցառմամբ, որտեղ հստակ նախանշված է բարձրացված հարցի լուծման մեխանիզմը:
2. 2-րդ հարցի կապակցությամբ Ա. Ասատրյանի կողմից նշվեց, որ ՀՀ արտադրական դժբախտ պատահարներից և մասնագիտական հիվանդություններից պարտադիր ապահովագրության համակարգի ներդրման հայեցակարգի նախագիծն արդեն իսկ ներկայացվել է Մշտապես գործող նախարարական սոցիալական կոմիտեի նիստում, որտեղ որոշում է կայացվել այն ևս մեկ անգամ լրացուցիչ քննարկելու մասին: Այս կապակցությամբ Ա. Ասատրյանն առաջարկեց, որ սոցիալական գործընկերներին տրամադրվի հայեցակարգի նախագծի՝ ՀՀ կառավարություն ներկայացված տարբերակը, որի ուսումնասիրությունից հետո կողմերը կարող են կազմակերպել լրացուցիչ քննարկում՝ դրա անհրաժեշտության առկայության դեպքում:
3. 3-րդ հարցի կապակցությամբ Ա. Ասատրյանի և Թ. Ավետիսյանի կողմից նշվեց, որ ռազմավարությունում արտացոլված են աշխատավարձի քաղաքականության հիմնական ուղղությունները: Այս շրջանակներում, անշուշտ, անդրադարձ է կատարվելու նաև աշխատավարձի ինդեքսավորման հարցերին:
4. 4-րդ հարցի կապակցությամբ նշվեց, որ ԱՄԿ «Զբաղվածության մասնավոր գործակալությունների մասին» թիվ 181 կոնվենցիայի վավերացումը նախատեսված է ՀՀ սկիզբ առնող անկանոն միգրացիայի երևույթի ուսումնասիրության և դրա կանխարգելման հայեցակարգի միջոցառումներով և համապատասխան քայլերը նույնպես ամրագրված են նշված փաստաթղթով:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց.

Հայաստանի Հանրապետության զբաղվածության 2013-2018 թվականների ռազմավարության նախագիծն ընդունել ի գիտություն, ևս մեկ անգամ անհրաժեշտության դեպքում այն քննարկել աշխատանքային ձևաչափով*:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

* 2012 թվականի հոկտեմբերի 17-ին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալի մոտ միջազգային փորձագետների, շահագրգիռ պետական մարմինների և սոցիալական գործընկերների մասնակցությամբ ևս մեկ անգամ քննարկվել է Հայաստանի Հանրապետության զբաղվածության 2013-2018 թվականների ռազմավարության նախագիծը: